ՎՐԱՍՏԱՆ

«ՎՐԱՍՏԱՆ» (ՆԱԽԱՐՈՒՅԼՈՒ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՆ № 57 - 58 (16758) ՇԱԲԱԹ 20 ՀՈՒԼԻՍԻ 2019 Թ. ԳԻՆԸ՝ 40 ԹԵԹՐԻ

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

«ՎՐԱՑԱԿԱՆ ԵՐԱԶԱՆՔԸ» ԵՐԲԵՔ ՉԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԻ ԴԵՊԻ ԱՊԱԿԱՌՈՒՑՈՂԱԿԱՆԸ ՄԻՏՎԱԾ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒԺԻ ՀԵՏ

Հուլիսի 16-ին Վրաստանի վարչապետ Մամուկա Բախտաձեն գործադիր իշխանության հերթական նիստին նախորդած ավանդական ճեպասուլիսում, անդրադառնալով առաջիկա խորհրդարանական ընտրությունների արդյունքում կոալիցիոն հնարավոր կառավարության ձեւավորման հարցին, հայտարարեց, որ «Վրացական երազանքը» երբեք չի համագործակցի այն ուժերի հետ, որոնք վերջին տարիներին ապակառուցողական կողմնորոշում ունեն: Ինչպես նշեց վարչապետը, կոալիցիոն կառավարության հավանականությունը բավականին բարձր է «Վրացական երազանքի» նախաձեռնության արդյունքում, որը նախատեսում է 2020 թվականի խորհրդարանական ընտրությունների անցկացում միայն համամասնական ընտրակարգով՝ զրոյական արգելանհշով:

- «Վրացական երազանքը» այն քաղաքական ուժն է, որ երաշխավորում է Վրաստանում խաղաղ զարգացման կընթանա պարտադիր ընթացակարգ եւ ժողովրդի քաղաքակիրթ ընտրության տրամաբանական ավարտ, այսինքն՝ խոսքը եվրոպական եւ եվրատլանտյան տարածքին Վրաստանի լիարժեք ինտեգրման մասին է: Ուստի, բնականաբար, «Վրացական երազանքը» երբեք չի համագործակցի այն ուժերի հետ, որոնք վերջին տարիներին ապակառուցողական կողմնորոշում ունեն պայմանականորեն եւ Վրաստանը դարձնում են ագրեսիվ օրակարգի պատանդ, ինչը մեծ ցավ ու զգալի վնաս է հասցնում մեր ազգային շահերին,- հայտարարեց Մամուկա Բախտաձեն:

Նշենք, որ 2020 թվականի խորհրդարանական ընտրություններից հետո, կոալիցիոն կառավարության ձեւավորման հարցը հավանական է համարում նաեւ Վրաստանի խորհր-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՀԱՆԴԻՊՈՒՄ

ԲԻՋԻՆԱ ԻՎԱՆԻՇՎԻԼԻ. «ՀՈՒՆԻՍԻ 20-ԻՆ ՈՒԺԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՐԾ ՉԻ ՇԱԳԵԼ»

Հուլիսի 17-ին Բաթումիում կայացավ «Վրացական երազանք - Ժողովրդավարական Վրաստան» կառավարող կուսակցության ղեկավարության եւ ակտիվիստների հանդիպումը: Հանդիպմանը, որին ներկա էին կուսակցության նախագահ Բիձինա Իվանիշվիլին, քաղաքական քարտուղար Իրակլի Ղարիբաշվիլին, գլխավոր քարտուղար Կախա Կալաձեն, գործադիր քարտուղար Իրակլի Կոբախիձեն, քննարկվեցին կուսակցության կազմակերպչական եւ կառուցվածքային փոփոխություններին առնչվող հարցեր: Հանդիպման ավարտին, կուսակցության հիմնադիր եւ նախագահ Բիձինա Իվանիշվիլին լրագրողներին ներկայացրեց երկրում ծավալվող իրադարձությունների սեփական տեսակետը, բնութագրեց կուսակցության կողմից իրականացվող քայլերի նշանակությունը:

Բիձինա Իվանիշվիլու հայտարարությամբ, հունիսի 20-ին պետական հեղաշրջման փորձի կանխման նպատակով իրավապահների գործողություններն ավելի քան արդարացված են, եւ որպես դրա ապացույց՝ նա նշեց, որ ո՛չ Վաշինգտոնից եւ ո՛չ էլ Եվրոպայից ոչ ոք հարց չունի հունիսի 20-ին ուժի կիրառման օրինականության մասին: Բիձինա Իվանիշվիլու խոսքով, ուժի կիրառման օրինականության առնչությամբ, եթե հարց հարուցվեր, այդ դեպքում կբարձրացվեր ներքին գործերի նախարարի պատասխանատվության հարցը:

- Հունիսի 20-ից սկսած, ընդդիմությունը, «Ազգային շարժումը», «Եվրոպական Վրաստանը», եւ փոքր կուսակցությունները, որոնք համակարծիք էին «Ազգային շարժման» հետ, առաջին օրից պահանջում էին, որպեսզի Գիորգի Գախարիան հրաժարական տա: Նրանց պահանջներից մեկն

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ԿՐԹԱԿԱՆ

ԻԱԿՈԲ ԳՈԳԵԲԱՇՎԻԼՈՒ «ԴԵԴԱ ԷՆԱՆ» ԿՎԵՐԱԴԱՌՆԱ ԴՊՐՈՑ

Հուլիսի 15-ին Վրաստանի վաչապետ Մամուկա Բախտաձեն, կրթության, գիտության մշակույթի եւ սպորտի նախարար Միխեիլ Բատիաշվիլին, Վրաստանի գործադիր եւ օրենսդիր մարմինների ներկայացուցիչները մասնակցեցին Վարինիի Իակոբ Գոգեբաշվիլու տուն-թանգարանում նոր ուսումնական տարվանից դպրոցներում Գոգեբաշվիլու «Դեդա էնայի» («Մայրենի լեզու») հարմարեցված տարբերակով վերադառնալու առնչությամբ անցկացվող միջոցառմանը:

Ելույթ ունենալով հանդիսությանը՝ Վրաստանի վարչապետը հայտարարեց, որ սեպտեմբերից վրացական դպրոցներ է վերադառնալու Իակոբ Գոգեբաշվիլու «Դեդա էնան»: Նրա խոսքով, սեպտեմբերից բոլոր առաջին դասարանցիները անվճար կստանան Իակոբ Գոգեբաշվիլու «Մայրենի լեզուն»:

- Այստեղ է ծնվել մեծ վրացին, ով ստեղծել է մեզանից յու-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՀԱՅԱՍՏԱՆ

ՆԱԽԱԳԱՀՆ ՈՒ ՎԱՐՉԱՊԵՏԸ ՔՆՆԱՐԿԵՑԻՆ ԵՐԿՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ԱՌՆՉՎՈՂ ՀԱՐՑԵՐ

Հուլիսի 15-ին Հայաստանի նախագահի նստավայրում կայացավ Հայաստանի նախագահ Արմեն Սարգսյանի հեթական աշխատանքային հանդիպումը վարչապետ Նիկոլ Փաշինյանի հետ: Հանդիպմանը նախագահն ու վարչապետը քննարկեցին երկրի զարգացման ծրագրերին վերաբերող ընթացիկ հարցեր:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՆՈՐ ԱՌԱՋՆՈՐԴ ԿԻՐԱԿՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԴԱՎԹՅԱՆԻ ԱՆԴՐԱՆԻԿ ՊԱՏԱՐԱԳԸ

ԱՅԴ ՕՐԸ ՆԱԹԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԸ ՆՐԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑ ՀԱՎԱՏԱՑՅԱԼՆԵՐԻՆ

Հուլիսի 14-ին Թբիլիսիի Սուրբ Գեւորգ առաջնորդանիստ եկեղեցում իր անդրանիկ Սուրբ պատարագը մատուցեց թեմի նորանշանակ առաջնորդական տեղապահ հոգեշնորհ Տեր Կիրակոս վարդապետ Դավթյանը:

Հավարտ Անմահ պատարագի՝ Սուրբ էջմիածնից ժամանած Մայր Աթոռի արտաքին հարաբերությունների եւ արարողակարգի բաժնի պետ Տեր Նաթան արքեպիսկոպոս Հովհաննիսյանը, թբիլիսահայերին ներկայացնելով թեմի նորանշանակ առաջնորդական տեղապահին, ասաց.

- Կիրակոս վարդապետ Դավթյանը մեկն է, ում երեւի գիտեն փոքր հասակից, մեկը, որ այսօր կանգնել է այս խորանին իբրեւ առաջնորդական տեղապահ, ով իր առաջին աղոթքն ու թոթվանքն սկսել է հենց այստեղից:

Ելույթ ունենալով հավատացյալների առջեւ՝ Կիրակոս վարդապետը հուզված նշեց.

- Ուրախությունս այսօր կրկնապատիկ է, քանի որ գտնվում եմ այն եկեղեցում, որտեղից սկսել եմ իմ առաջին քայլերը հոգեւոր կյանքում:

Լինելով այս քաղաքից, լինելով այս եկեղեցու ծառայող եւ լի-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԿԻՐԱԿՈՍ ՎԱՐԴԱՊԵՏԸ ՀԱՆԴԻՊԵՑ ՎՐԱՍՏԱՆԻ ԿՐՈՆԻ ՀԱՐՑԵՐՈՎ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՀԵՏ

Հուլիսի 17-ին, Վրաստանի կառավարության նստավայրում, Վրաստանի Կրոնի հարցերով պետական գործակալության նախագահ Զազա Վաշաղմաձեն հանդիպում ունեցավ Հայ Առաքելական եկեղեցու Վիրահայոց թեմի նորանշանակ առաջնորդական տեղապահ Կիրակոս վարդապետ Դավթյանի հետ: Հանդիպումը ծանոթության բնույթի էր:

Զազա Վաշաղմաձեն Կիրակոս վարդապետին շնորհավորեց Վիրահայոց թեմի նոր ղեկավար նշանակվելու կապակցությամբ եւ հաջողություններ մաղթեց առաջնորդական ծառայության գործում:

Կրոնի գործակալության նախագահը անդրադարձ կատարեց Հայ Առաքելական Սուրբ եկեղեցու եւ Վրաց Ուղղափառ եկեղեցու

ԿՐԹԱԿԱՆ

ԻԱԿՈԲ ԳՈԳԵԲԱՇՎԻԼՈՒ «ԴԵՌԱ ԷՆԱՆ» ԿՎԵՐԱԴԱՌՆԱ ԴՊՐՈՑ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

ռաքանչյուրի ամենասիրելի գիրքը՝ հարազատ «Մայրենի լեզուն»: Մարդ, ով կարեւորագույն ներդրումն է ունեցել պատմական առաքելության մեջ, որի անունն է վրաց լեզվի տարածում: Այսօր մենք գտնվում ենք Իակոբ Գոգեբաշվիլու տուն-թանգարանի մոտ, որտեղից ցանկանում եմ ողջունել համայն Վրաստանին: Սա դարաշրջան էր, երբ հույժ կարեւոր էր ճշմարիտ հայրենասեր անձանց համախմբվածությունը: Սա մեծ մարտահրավեր էր այն ժամանակների Վրաստանի համար, երբ վրաց լեզուն վերացման եզրին էր: Վրաց հայրենասերները գործադրեցին անհնարինը, կարողացան եւ ստեղծեցին գիրք, որը փոխանցվում է սերնդեսերունդ, որը օգնում է պահպանել ամենասուրբը՝ վրաց լեզուն եւ վրացական այբուբենը,- հայտարարեց վարչապետը:

Վաչապետի խոսքով, Վրաստանի խորհրդարանն արդեն ընդունել է օրենք, որի համաձայն, ցանկացած իշխանություն պարտավոր է բյուջեի մեկ չորրորդը՝ 25 տոկոսը, ուղղել կրթությանը, երեխաներին եւ ապագա սերունդներին:

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

«ՎՐԱՅԱԿԱՆ ԵՐԱԶԱՆՔԸ» ԵՐԲԵՔ ՉԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԻ ԴԵՊԻ ԱՊԱԿԱՌՈՒՅՈՂԱԿԱՆԸ ՄԻՏՎԱԾ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒԺԻ ՀԵՏ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

դարանի փոխխոսնակ Թամար Չուգոշվիլին: Նրա խոսքով, համամասնական ընտրակարգով անցկացված ընտրություններում դժվար է պատկերացնել, որ որեւէ կուսակցության կիաջողվի ստանալ ընտրողների ձայների 60 տոկոսը:

- Ինչ վարկանիշ էլ ունենա այս կամ այն քաղաքական կուսակցությունը, նա դժվար թե կարողանա ստանալ ձայների 60-70 տոկոսը: Բոլոր դեպքերում, կոալիցիոն կառավարության ձեւակերպումը կդառնա անխուսափելի, ինչը, ըստ իս, լավ է եւ արդարացի,- հայտարարեց Թամար Չուգոշվիլին:

Նշենք, որ, 2020 թվականի խորհրդարանական ընտրությունների արդյունքներով, կոալիցիոն կառավարության ձեւավորման հավանականությունը հաստատվում է նաեւ Ամերիկայի Միջազգային հանրապետական ինստիտուտի (IRI) Վրաստանում գործող կուսակցությունների վարկանիշի վերաբերյալ հետազոտություններով: Նշենք, որ հետազոտությունն իրականացվել է մինչեւ հունիսի 20-21-ի դեպքերը:

IRI հետազոտության համաձայն, այն հարցին, թե՝ եթե այս շաբաթ անցկացվեն ընտրություններ, ո՞ր կուսակցության օգտին կքվեարկեք, հարցվածները, ըստ տոկոսային հարաբերության պատասխանել են. «Վրացական երազանք - ժողովրդավարական Վրաստան»՝ 26 տոկոս, «Միասնական ազգային շարժում՝ Միացյալ ընդդիմություն»՝ 22 տոկոս, «Եվրոպական Վրաստան - Ազատ ժողովրդավարներ»՝ 7 տոկոս, «Հայրենասերների դաշինք»՝ 5 տոկոս, «Լեյբորիստական կուսակցություն»՝ 5 տոկոս, «Քաղաքացիական շարժում»՝ 2 տոկոս, «Ժողովրդավարական շարժում - Միացյալ Վրաստան»՝ 2 տոկոս, «Կառույցների շարժում»՝ 2 տոկոս, «Գիրչի»՝ 1 տոկոս:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՆՈՐ ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ ԿԻՐԱԿՈՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԱՆԴՐԱՆԻԿ ՊԱՏԱՐԱԳԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Նելով այս ժողովրդի, եւ այս հողի ու ջրի զավակ՝ վստահ եմ, որ յուրաքանչյուրիդ օգնությամբ եւ յուրաքանչյուրիդ հետ միասին մենք կարողանալու ենք առաջ տանել Թբիլիսիի եւ ամբողջ Վիրահայոց հոգեւոր կյանքը,- այսպես ավարտեց իր խոսքը նորանշանակ առաջնորդական տեղապահ Կիրակոս վարդապետ Դավթյանը:

Տեր Կիրակոս վարդապետ Դավթյանը ծնվել է 1982թ., Թբիլիսիում: 1989-1999 թթ. սովորել է տեղի թիվ 104 միջնակարգ դպրոցում, իսկ 1999-2004 թթ.՝ Սուրբ Էջմիածնի Գեւորգյան հոգեւոր ճեմարանում: 2005թ. նոյեմբերին պաշտպանել է ավարտաճառ՝ «Հայ-վրացական եկեղեցական բաժանման վավերագրերը» թեմայով: 2005-2006 թթ. աշխատել է Էջմիածնի գլխավոր աթոռանիստ տաճարի Աստվածաբանական-հայագիտական կենտրոնում: 2005թ. փետրվարի 5-ին, ձեռամբ Գերաշնորհ Տեր Եզնիկ արքեպիսկոպոս Պետրոսյանի, ձեռնադրվել է կուսակրոն քահանա՝ վերակոչվելով Կիրակոս աբեղա: Մինչեւ 2008թ.՝ որպես հոգեւոր հովիվ, ծառայել է Վիրահայոց թեմի Բաթումիի Սուրբ Փրկիչ եկեղեցում: Ապա մոտ 15 տարիների ընթացքում ծառայել է Հայ Առաքելական Սուրբ եկեղեցու տարբեր թեմերում:

ԿԻՐԱԿՈՍ ՎԱՐԴԱՊԵՏԸ ՀԱՆԴԻՊԵՑ ՎՐԱՍՏԱՆԻ ԿՐՈՆԻ ՀԱՐՑԵՐՈՎ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՀԵՏ

դարավոր բարեկամությանը, Վրաստանում տարբեր կրոնական կազմակերպությունների հաջող գործունեությանը: Նա իրազեկեց նաեւ Վրաստանի պետության կողմից վերջին տարիներին իրականացված կրոնական քաղաքականության, Կրոնի գործակալության գործունեության, ի մասնավորի՝ կրոնական կազմակերպությունների ֆինանսավորման, պաշտամունքային շինությունների վերադարձի եւ այլ նախագծերի մասին:

Կիրակոս վարդապետ Դավթյանը գործակալության նախագահին շնորհակալություն հայտնեց հյուրընկալության համար եւ նշեց, որ լինելով այս հող ու ջրի զավակ՝ իրեն հարազատ են երկու քրիստոնյա ժողովուրդների դարերի խորքից եկող բարեկամությունը եւ Վրաց Ուղղափառ եւ Հայ Առաքելական Սուրբ եկեղեցիների դերն ու ավանդը հարեւան ժողովուրդների բարիդրացիական հարաբերությունների ամրապնդման եւ զարգացման գործում:



ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ ԵՎՐԱՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆ ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ԿՈՒՆԵՆԱ ԿԻՆ ՂԵԿԱՎԱՐ

Պատգամավորների 383 ձայնով Եվրոպական դաշինքի առաջնորդի պաշտոնը վստահվել է 2013-ից Գերմանիայի պաշտպանության նախարար Ուրսուլա ֆոն դեր Լայենին: Նրա ղեկավարմանը դեմ է եղել 327 պատգամավոր, ձեռնպահ՝ 22-ը:

Ուրսուլա ֆոն դեր Լայենը նոր պաշտոնը կգբաղեցնի նոյեմբերի 1-ից՝ փոխարինելով Ժան-Կլոդ Յունկերին:

ԱՄՆ - ԵՄ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐ՝ ԹՈՒՐՔԻԱՅԻ ԴԵՄ

Թուրքիայի կողմից Կիպրոսի բացառիկ տնտեսական գոտում իրականացվող հորատման աշխատանքները շարունակելու հետ կապված ԵՄ-ն հրապարակել է Թուրքիայի դեմ իրականացվելիք պատժամիջոցները:

Պատժամիջոցներով նախատեսվում է 2020 թվականին ԵՄ-ից ֆինանսական օժանդակության նվազեցում 146 մլն եվրոյով, չեղարկվում են տնտեսական եւ առեւտրային հարաբերությունների վերաբերյալ քաղաքական երկխոսությունները, ընդհատվում ավիացիոն պայմանագրերի կնքման բանակցությունները, վերանայվում է Եվրոպական ներդրումային բանկից Թուրքիային տրվելիք վարկային օժանդակությունը:

Թուրքիայի կողմից Ռուսաստանից հրթիռների ձեռքբերման համար ԱՄՆ եւս պատժամիջոցներ է մտադիր սահմանել Թուրքիայի դեմ:

ՌՈՒՍԱՍՏԱՆ ԱՄԵՐԻԿՅԱՆ 35-Ի ԴԻՄԱՑ, ՌՈՒՍԱԿԱՆ 27

Ռուսաստանյան «Ռոստեխ» ընկերությունը պատրաստ է Անկարայի ցանկության դեպքում, Թուրքիային վաճառել 27 ինքնաթիռ: Նշենք, որ ԱՄՆ-ը, որպես պատժամիջոց, մտադիր է մերժել Թուրքիային հինգերորդ սերնդի 35 ռազմական ինքնաթիռների վաճառման հարցում: Ռուսաստանի կողմից առաջարկվող 27 ինքնաթիռ չորրորդ սերնդի է, թեպետ իր ցուցանիշներով գրեթե հավասարված է հինգերորդին:

ԻՐԱՎԱԿԱՆ

«ՌՈՒՍԹԱՎԻ 2»-Ը ՎԵՐԱԴԱՐՁՎՈՒՄ Է ՕՐԻՆԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆԱՏԻՐՈՋԸ

Ինչպես արդեն հաղորդել էինք, դեռեւս 2015 թվականի օգոստոսին հեռուստաընկերության նախկին սեփականատերերից գործարար Քիբար Խալվաշին պահանջ ներկայացեց իրեն վերադարձնել վաճառված հեռուստաընկերությունը՝ պատճառաբանելով, որ իբր 2006 թվականին վաճառքից ստացած գումարն իրեն չի գոհացնում: Ավելացնենք, որ Քիբար Խալվաշին հեռուստաընկերության սեփականատեր է համարվել մեկ տարի, ընկերության բաժնեմասերը վաճառելուց հետո, մի քանի սեփականատեր է փոխվել:

Վրաստանի Գերագույն դատարանը 2017 թվականի մարտի 2-ին որոշում էր կայացրել չեղյալ համարել «Ռուսթավի 2» ՍՊԸ-ի համասեփականատերեր Լեւան Ղարամանաշվիլու (22%), Գիորգի Ղարամանիշվիլու (18%), «Վրաստան հեռուստաընկերության» (51%) եւ Նինո Նիժարիձեի (9%) բաժնեմասերի գրանցումը հանրային ռեեստրում եւ «Ռուսթավի 2» ՍՊԸ-ի 60% մասնաբաժնի սեփականատեր ճանաչել Քիբար Խալվաշիին, մնացած 40%-ը կտնօրինի «Մանորամա» ՍՊԸ-ն»: Ի դեպ, նշված ընկերությունը եւս պատկանում է Խալվաշիին, հետեւաբար, նա փաստացի հեռուստաընկերության միակ՝ 100%-անոց սեփականատերն է:

Գերագույն դատարանի որոշումը բողոքարկման ենթակա չէ, այդ իսկ պատճառով, հեռուստաընկերության իրավաբանները դիմեցին Մարդու իրավունքների եվրոպական դատարան:

Վերոնշյալ դատարանի որոշումը հայտնի դարձավ հուլիսի 18-ին: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշման համաձայն, «Ռուսթավի 2» հեռուստաընկերության սեփականության որոշման վերաբերյալ Վրաստանի դատարաններում կոնվենցիայի հոդվածները չեն խախտվել: Չի խախտվել նաեւ արդար դատաքննության իրավունքը: Որոշումն ընդունվել է Մեծ Պալատի կողմից՝ 6 կողմ եւ 1 դեմ ձայներով:

Ստրասբուրգի դատարանի որոշման հրապարակումից անմիջապես հետո, հանրային ռեեստրը նորանշանակ սեփականատեր Քիբար Խալվաշիի պահանջով «Ռուսթավի 2»-ի տնօրեն է նշանակել Պաատա Սալիային՝ Խալվաշիի փաստաբանին: Տնօրենի պաշտոնից Նիկա Գվարամիան հեռացվել է:

Ավելացնենք, որ Քիբար Խալվաշիի կողմից հեռուստաալիքի 100 տոկոսանոց սեփականատիրոջ իրավունքը որոշել է բողոքարկել Վրաստանի պաշտպանության նախկին նախարար Իրակլի Օքրուաշվիլին: Նրա հայտարարությամբ, ինքն ունի բաժնեմասերի որոշակի մասի նկատմամբ իր սեփականությունը հավաստող փաստաթղթեր եւ մտադիր է դիմել դատարանին:

ՅՈՒՐԻ ԽՈՐԵՆՅԱՆ

Ճաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՊԱՏԳԱՄ

ԻԼԻԱ ԵՐԿՐՈՐԴ. «ՆԱԽ ԹԵՐԱՑՈՒՄԸ ՓՆՏՐԻՐ ՔՈ ՄԵՋ, ՀԵՏՈ՝ ՄՅՈՒՍՆԵՐԻ»

Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք, Սրբազնագույն եւ Երանաշնորհ Իլիա Երկրորդը, ով հայտնի է իր քաղաքացիական հստակ դիրքորոշմամբ, հաճախ, իր քարոզներում հավատացյալներին դիմելիս, անդրադառնում է ոչ միայն կրոնի, եկեղեցու հարցերին, այլեւ աշխարհի հասարակայնությանը հուզող հիմնախնդիրներին, խոսում կրթության, մշակույթի եւ մյուս ոլորտների մասին, կոչ անում պահպանել բարոյական սկզբունքները:

Մասնավորապես, հուլիսի 14-ին Թբիլիսիի Սուրբ Երրորդության տաճարում իր քորազչության ժամանակ Իլիա Երկրորդը, անդրադառնալով մարդկանց վարվելակերպին, նշեց, որ կան մարդիկ, ովքեր այլ մարդկանց մեջ են փնտրում թերացումները, մինչդեռ իրականում պետք է դրանք փնտրեն իրենց մեջ:

- Յուրաքանչյուր մարդ այս աշխարհ է գալիս որոշակի առաքելությամբ: Առիթ եմ ունեցել կարդալ մի ընտանիքի պատմություն, որտեղ՝ «Կինը ամուսնուն խնդրում է, որ ցանկանում եմ շատ մոտ լինել քեզ, լինել հավատարիմ ու դրա համար խնդրում եմ հայտնես, թե ի՞նչ թերություն ունեմ ես: Ողջ գիշեր ամուսինը մտածում է, թե ի՞նչ թերություն կարող է ունենալ իր կինը: Առավոտյան ասում է, որ ոչ մի թերություն ինքը չի կարողացել գտնել, որ սիրում է նրան այնպես, ինչպիսին կա»:

- Ցանկանում եմ բոլորին խորհուրդ տալ՝ սիրեցե՛ք միմյանց, ընտանիքը, ամուսնուն, կնոջը, զավակներին, դա մեծ ուժ է: Կան մարդիկ, ովքեր թերությունը փնտրում են ուրիշների մեջ, մինչդեռ իրականում այն պետք է որոնեն իրենց մեջ եւ ուղղեն, պետք է սկսեն իրենցից,- պատգամեց Կաթողիկոս-Պատրիարքը:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՄԵԿ ԼԱՐԻՈՎ ԴԵՂԱՄԻՋՈՑՆԵՐ՝ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՌՈՒՆԵՐԻՆ ԵՎ ՀԱՇՄԱՆԴԱՄՆԵՐԻՆ

Հուլիսի 15-ի Վրաստանի կառավարության նիստում վարչապետ Մամուկա Բախտաձեն հայտարարեց, որ կառավարության նախաձեռնությամբ կիրարկվելու է սոցիալական նոր նախագիծ, ըստ որի, քրոնիկ հիվանդությունների բուժման համար դեղամիջոցների ծրագրում կատարվում են փոփոխություններ, որոնց համաձայն, չեղարկվում է առկա տարբերակումը եւ, սոցիալապես անապահով անձանց հետ միասին, կենսաթոշակառուները, սահմանափակ ունակություններ ունեցող անձինք եւ այլ խմբեր դեղամիջոցները կկարողանան ստանալ մեկ լարիով:

- Այսօր գոյություն ունեցող տարբերակումը վերացվում է եւ սոցիալապես անապահով մարդկանց հետ միասին, թոշակառուները, հաշմանդամություն ունեցող եւ այլ անձինք կկարողանան քրոնիկ հիվանդությունների համար դեղամիջոցներ ձեռք բերել մեկ լարիով: Խոսքը մոտ 35 տեսակի դեղամիջոցների մասին է, որոնք հիմնականում սիրտ-անոթային, վահանաձեւ գեղձի, շաքարախտի, թոքերի, էպիլեպսիայի եւ պարկինսոնի հիվանդությունների դեմ են,- ասաց Վրաստանի վարչապետը եւ հավելեց, որ շարունակվելու է աշխատանքը, որպեսզի դեղամիջոցների համար «գրպանից» վճարված գումարները հասցվեն նվազագույնի:

ԴԻՄԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

ԲՈՂՈՔԻ ԱԿՑԻԱՆԵՐԻ 30-ՐԴ ՕՐ. ՀԱՆՐԱՀԱՎԱՔԻ ՊԱՀԱՆՋԸ ՄՆՈՒՄ Է ԱՆՓՈՓՈԽ

Հունիսի 20-ի հայտնի միջադեպից հետո, Թբիլիսիում, Ռուսթավելու պողոտայում, խորհրդարանի շենքի դիմաց արդեն 30-րդ օրն է, ինչ անցկացվում են ՆԳ նախարարի պաշտոնաթողության պահանջով հանրահավաքներ: Թեպետ, հանրահավաքները, որպես այդպիսին շատ ավելի խաղաղ- բնույթ ունեն եւ մեծ մասամբ ուղեկցվում են տարբեր համույթների ելույթներով ու նկարների եւ լուսանկարների ցուցադրմամբ:

Նշենք, որ Վրաստանի գլխավոր դատախազությունը շարունակում է հունիսի 20-21-ի իրադարձությունների առնչությամբ հետաքննությունը եւ ձերբակալել է ներքին գործերի նախարարության առանձնահատուկ հանձնարարությունների դեպարտամենտի չորս աշխատակցի: Իսկ հունիսի 17-ին գլխավոր դատախազությունը հարցաքննել է Վրաստանի ներքին գործերի նախարար Գիորգի Գախարիային ցուցարարների եւ ոստիկանության միջեւ հունիսի 20-ին տեղի ունեցած բախումների գործով: Հարցաքննվել է նաեւ «Միասնական ազգային շարժման» առաջնորդ Գրիգոլ Վաշաձեն:



47 ՄԻԼԻՈՆ ԵՎՐՈ՝ ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆԻՑ

Վրաստանի ֆինանսների նախարարության տեղեկատվությամբ, Բաթումիում անցկացված «Վրաստանի եվրոպական ճանապարհ» գիտաժողովի շրջանակներում, Վրաստանի եւ Եվրամիության միջեւ ձեռք է բերվել երկու համաձայնագիր:

Ֆինանսական համաձայնագրի բյուջեն կազմում է 47 մլն եվրո: Գիտաժողովին Վրաստանի եւ Եվրամիության միջեւ ստորագրվել է «Անվտանգության ուժեղացման եւ հանցագործության դեմ պայքարի աջակցության» (EU4 Security, Accountability and Fight against Crime in Georgia (SAFE) համաձայնագիրը, որի շրջանակներում Վրաստանը կստանա 28 մլն եվրո: Երկրորդ համաձայնագիրը, որի շրջանակներում Վրաստանը կստանա 19 մլն եվրո, դա «Եվրամիությունը Վրաստանում տնտեսական կառավարման եւ ֆինանսական հաշվետվության աջակցության համար» ստորագրված համաձայնագիրն է:

ՌՈՒՍԱՍՏԱՆԻՑ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԸ ՆՎԱԶԵԼ ԵՆ, ԻՍԿ ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆԻՑ՝ ԱՎԵԼԱՑԵԼ

2019 թվականի հունիսին Վրաստան դրամական փոխանցումների ծավալը կազմել է 143,6 միլիոն դոլլար (398,8 միլիոն լարի), որը 6,3 տոկոսով ավելի է 2018 թվականի հունիսի ցուցանիշից:

Ամենաշատ գումարը՝ 4,78 միլիոն դոլար, Վրաստան է փոխանցվել Ռուսաստանից, սակայն նախորդ տարվա հունիսի համեմատ, գումարի ծավալը նվազել է 11 տոկոսով: 19,3 միլիոն դոլար Վրաստան է փոխանցվել Իտալիայից (+23,99 տոկոս), 17 միլիոն դոլար՝ Հունաստանից (+23,06 տոկոս), 15,29 միլիոն դոլար՝ ԱՄՆ-ից (+7,53 տոկոս), 13,39 միլիոն դոլար՝ Իսրայելից (+0,67 տոկոս):

Եվրամիության երկրներից դրամական փոխանցումների ծավալը հունիսին ավելացել է 25 տոկոսով:

ՅԵՄՈՍԱՎԼԵԳՈՒՆ ՍԱՄՍԱԽՈՒՐ

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ԱՆՑԿԱՑՎԵՑ ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՀԱՄԱԺՈՂՈՎ

Հուլիսի 12-ին Թբիլիսիի «Շերաթոն Մետեխի պալաս» հյուրանոցում, Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության նախաձեռնությամբ, անցկացվեց Եվրամիության տեխնիկական օգնության եղբայրացման «Տրանսպորտային ոլորտում Եվրամիության հիմնադրույթներին Վրաստանի միավորման եւ տրանսպորտային համակարգի նոր համակարգման (NCTS) կիրարկման աջակցության» նախագծի տեղեկատվական մակարդակի բարձրացմանը նվիրված համաժողով:

Համաժողովի աշխատանքին մասնակցեցին եկամուտների ծառայության պետ Վախթանգ Լաշքարաձեն, ծառայության պետի տեղակալներ Իրակլի Շարտավան եւ Վլադիմիր Խունդաձեն: Մասնակիցների թվում էին նաեւ պետական տարբեր գերատեսչությունների ու բիզնես հատվածի ներկայացուցիչներ, գործընկեր երկրների (Լատվիա, Ֆինլանդիա, Լեհաստան) մաքսային վարչակարգերի փորձագետներ: Որպես պատվավոր հյուր՝ համաժողովին ներկա էին Թուրքիայի ներկայացուցիչները:

Միջոցառումը ներածական խոսքով բացեց ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության հարկային դեպարտամենտի պետ Մամուկա Ջանգուլաշվիլին: Նրա խոսքով, մաքսային դեպարտամենտը ակտիվ աշխատում է Եվրամիության տրանսպորտային ընտանիքին անդամակցության ուղղությամբ:

- Վրաստանի եւ Եվրամիության միջեւ Ասոցիացման համաձայնագրի խոր եւ համընդգրկուն ազատ առեւտրի տարածքի շրջանակներում ստանձնած պարտավորությունների համապատասխան, մաքսային դեպարտամենտն ակտիվ աշխատում է Եվրամիության տրանսպորտային ընտանիքին անդամակցության ուղղությամբ, ինչը նախատեսում է ինչպես օրենսդրական տեսանկյունից նշանակալի բարեփոխումների իրականացում, այնպես էլ՝ տեղեկատվական տեխնոլոգիաների համակարգի ներդրում: Իսկ արդյունքում, կստանանք արդյունավետ եւ անվտանգ համակարգ, առեւտրական հարաբերությունների խրախուսում, վերահսկողության պարզ ընթացակարգեր,- հայտարարեց Մամուկա Ջանգուլաշվիլին:

Համաժողովում անցկացված շնորհանդեսների եւ ելույթների ընթացքում, Եվրամիության անդամ պետությունների նախագծի ղեկավար Պիրիո Կատրոն, նախագծի կիրարկման պետությունների նախագծի ներկայացուցիչ Սամսոն Ուրիդիան, Վրաստանի եկամուտների ծառայության մաքսային դեպարտամենտի տեղակալ Մուրման Արախամիան եւ նախագծի խորհրդական կառավարիչ Արտո Լիլմանը, վերոնշյալ նախագծի նպատակների եւ առաջիկա ծրագրերի շրջանակներում, քննարկեցին տրանսպորտային ոլորտում Եվրամիության հիմնադրույթներին Վրաստանի միավորման եւ տրանսպորտային նոր համակարգում համակարգչային տեխնոլոգիաների ներդրման հեռանկարները:

ԲԱՑԱՀԱՅՏՎԵԼ Է ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԽԱԽՏՄԱՆ 502 ԴԵՊՔ

Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության հարկային մոնիթորինգի դեպարտամենտի կողմից երկրի ողջ տարածքով անցկացված ստուգիչ միջոցառումների արդյունքում, բացահայտվել է հարկային օրենսդրության խախտման 502 դեպք:

Մասնավորապես, ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության հարկային մոնիթորինգի դեպարտամենտի աշխատակիցներն ստուգել են 4274 հարկատուի: Ստուգման արդյունքում, բացահայտվել են հարկային օրենսդրության հետեւյալ խախտումները. առանց ապրանքագրերի ապրանքների փոխադրման 105 փաստ, տնտեսական գործունեության իրականացման համար հարկատուի կողմից օրենսդրությամբ սահմանված կարգի 26 դեպք, կանխիկ գումարներով առքուվաճառքի ժամանակ գանձարկղային սարքի անտեսման 371 փաստ:

ՀԱՆԴԻՊՈՒՄ

ԲԻՁԻՆԱ ԻՎԱՆԻՇՎԻԼԻ. «ՀՈՒՆԻՍԻ 20-ԻՆ ՈՒԺԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՐԺ ՉԻ ՇԱԳԵԼ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

էր դա: Ո՛չ Վաշինգտոնից եւ ո՛չ էլ Եվրոպայից ոչ ոք հարց չունի հունիսի 20-ին ուժի կիրառման օրինականության մասին: Ուժը կիրառվել է օրինական կերպով,- հայտարարեց «Վրացական երազանքի» նախագահը եւ հավելեց, որ նման պարագայում ներքին գործերի նախարարի հրաժարականը հավասարազոր էր հայրենիքի դավաճանության:

Շարունակելով թեման՝ Բիձինա Իվանիշվիլին անդրադարձավ նաեւ «Ռուսթավի 2» հեռուստաընկերության կողմից աղմկահարույց «Պոստսկրիպտում» հաղորդմանը՝ հայտարարելով, որ «Միասնական ազգային շարժում» ընդդիմադիր կուսակցության անդամները փորձում են խորտակել երկրի տնտեսությունը եւ խանգարել զբոսաշրջության զարգացմանը:

- Անշուշտ այն, ինչ տեղի ունեցավ «Ռուսթավի 2» հեռուստաալիքում, ամոթալի է մեր երկրի, մեր մշակույթի համար: Այն հայհոյանքը, որը մենք լսեցինք ձեր հեռուստաընկերության եթերում, անշուշտ, կդատապարտի ամբողջ հասարակությունը: Չնայած «Ազգային շարժման» փորձերին, Վրաստանում դադարեցնել զբոսաշրջությունը, խորտակել տնտեսությունը, առեւտուրը, մենք ամեն ինչ կանենք, որպեսզի զարգացնենք երկիրը եւ բարելավենք տնտեսությունը: Իհարկե, ես դատապարտում եմ Գվարամիայի եւ Գաբունիայի արարքները: Սա պետք է դատապարտեն բոլոր վրացիները: Սա բացառապես հակավրացական եւ անպարկեշտ ելույթ էր,- նշեց Բիձինա Իվանիշվիլին՝ դիմելով «Ռուսթավի 2»-ի լրագրողին:

Լրագրողների հետ հանդիպմանը անդադարձ կատարվեց նաեւ 2020 թվականի խորհրդարանական ընտրությունների թեմային: Ըստ Բիձինա Իվանիշվիլու, չնայած, որ ընտրությունները կանցկացվեն համամասնական ընտրակարգով, իր գլխավորած կուսակցությունը կկարողանա ստանալ բավարար քանակությամբ մանդատներ, միաժամանակ բացառված չէ, որ ձեւավորվի կոալիցիոն կառավարություն:

- Ես չեմ բացառում, որ 2020 թվականին մենք մեծամասնություն կլինենք: Եթե դա տեղի չունենա, եւ նման հավանականություն կա, մենք կհամագործակցենք բոլորի հետ, բացի «Ազգային շարժումից,- ասաց Իվանիշվիլին:

ՆԱԽԱԳԻԾ

ԲԱՐՁՐԱԴԻՐ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱՏԵՍՈՒՄ Է ԿԵՆՍԱՄԱԿԱՐԴԱԿԻ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ

Վրաստանի վարչապետ Մամուկա Բախտաձեն լրագրողների հետ հանդիպմանը խոսեց Վրաստանի բարձրադիր տարածաշրջանների զարգացման 2019-2023 թվականների ռազմավարության մասին՝ նշելով, որ այն նախատեսում է տեղի բնակիչների կենսամակարդակի բարձրացում: Ինչպես նշեց վարչապետը, իշխանությունների նպատակն է այդ տարածաշրջաններում կյանքը դարձնել հարմարավետ եւ կանխել դրանց մարդաթափումը:

- Մեր գործընկերների հետ մշակել ենք բարձրադիր գոտիների զարգացման 2019-2023 թվականների ռազմավարություն, որն է՛լ ավելի հավակնոտ է, եւ հաշվի է առնվել յուրաքանչյուր մանրամասնություն: Սա երկարաժամկետ զարգացման ռազմավարություն է, որը նոր մակարդակի կհասցնի լեռնային գոտիների զարգացումը Վրաստանում: Այս նպատակին հասնելու համար, պարտադիր է բարձրադիր գոտիներում զբոսաշրջության, գյուղատնտեսության, արդյունաբերության զարգացումը, բնակավայրերում բնակիչների սոցիալական աջակցությունն է՛լ ավելի լայնածավալ ծրագրերով՝ առողջապահության եւ այլ ծառայությունների հասանելիություն, ժողովրդագրական իրավիճակի բարելավում, ճանապարհային եւ այլ ենթակառույցների զարգացում: Այս նպատակները ենթադրում են կոնկրետ գործողությունների ծրագիր,- հայտարարեց վարչապետը:

- Այդ ռազմավարությունը ուղղված է երկարաժամկետ զարգացմանը, որը բարձրադիր տարածաշրջանների զարգացումը կհասցնի նոր մակարդակի: Դրան հասնելու համար անհրաժեշտ է զարգացնել զբոսաշրջությունը, գյուղատնտեսությունը, ձեռներեցությունը, սոցիալական աջակցություն ցուցաբերել տեղի բնակիչներին, իրականացնել է՛լ ավելի լայնածավալ նախագծեր,- ասաց վարչապետն ու հավելեց, որ վերոնշյալ ռազմավարությունը նախատեսում է նաեւ առողջապահության եւ պետական մյուս սպասարկումների զարգացում, ինչը թույլ կտա բարելավել ժողովրդագրական իրավիճակը, զարգացնել ճանապարհային ենթակառույցները:

- Այս նպատակներից յուրաքանչյուրը հետապնդում է գործողության ծրագիր, որը նախատեսում է ենթակառույցների ներդրումների ավելացում: Մասնավորապես, ծրագրված է շտապ օգնության, ամբուլատորիաների, մանկապարտեզների, դպրոցների, ջրամատակարարման, կառույցների եւ ճանապարհների շինարարություն ու վերանորոգում, զբոսաշրջության ենթակառույցների կարգավորում, մշակութային ժառանգության հուշարձանների վերականգնում, միասնական էլեկտրոնային համակարգի, համացանցի եւ այլնի հիմնում,- հայտարարեց Մամուկա Բախտաձեն եւ հիշեցրեց, որ դեռեւս հինգ տարի առաջ Վրաստանի կառավարությունը բարձրադիր տարածաշրջանների զարգացումը հայտարարել էր առաջնահերթային եւ ընդունել «Բարձրալեռ տարածաշրջանների զարգացման մասին» օրենքը:

Անդրադառնալով վերոնշյալ օրենքի կիրարկման զարգացումներին՝ վարչապետը նշեց, որ հիմնվել էր բարձրադիր բնակավայրերի զարգացման հիմնադրամ եւ բարձրադիր տարածաշրջանների զարգացման ազգային խորհուրդ՝ վարչապետի նախագահությամբ:

- Բարձրալեռ բնակավայրերի հիմնադրամը 2016-2019 թվականներին կազմում էր 86 միլիոն լարի, ավելի քան 30 միլիոն դոլար: Չորս տարվա ընթացքում այդ գումարները ծախսվեցին ենթակառույցային գյուղատնտեսական եւ սոցիալական այլ ծրագրերի ֆինանսավորման համար,- նշեց Մամուկա Բախտաձեն ու հավելեց, որ օրենքի կիրարկումից հետո, սոցիալական ծրագրերի շրջանակներում հատկացվել է ավելի քան 185 միլիոն լարի, որի կեսից ավելին՝ 82 միլիոն լարին, ծախսվել է կենսաթոշակային հավելավճարի համար: Այս տարի ենթակառույցների զարգացման նախագծերի ֆինանսավորման համար հատկացվել է 66 միլիոն լարի: Բացի այդ, երկրի բարձրալեռ 17730 բնակավայրերից ավելի քան 300 հազար բնակիչներն օգտվում են հատուկ արտոնություններից, դրանց թվում՝ ավելացած կենսաթոշակից, արտոնյալ սակագներով սոցիալական վճարումներից եւ այլ ծրագրերից:

Նշենք, որ դեռեւս հունիսի վերջերին բարձրալեռ տարածաշրջանների համար առաջնահերթային հիմնախնդիրների բացահայտման նպատակով, Վրաստանի տարածաշրջանային զարգացման եւ ենթակառույցների նախարարության պատվերով միջազգային ISET եւ GIPA կազմակերպությունները, Եվրամիության եւ UNDP-ի ֆինանսավորմամբ եւ CTC հետազոտական կենտրոնի աջակցությամբ, անցկացրին հետազոտություն:

Ուսումնասիրությունների արդյունքները ցույց տվեցին, որ բարձրադիր տարածաշրջանների համար առաջնահերթայինը մնում է անասնապահությունը, ապա՝ զբոսաշրջությունը: Ինչպես նշված է եզրակացության մեջ, ուսումնասիրության օբյեկտ տարածաշրջաններում անասնապահությունը որոշակիորեն զարգացած է, թեպետ ոլորտի զարգացման համար դեռեւս առկա են նշանակալի հիմնախնդիրներ: Մասնավորապես, փոքր են անասնապահական տնտեսությունը, ցածր է արտադրողականությունը: Եզրակացության մեջ՝ որպես հիմնախնդրի կարգավորման հանձնարարական, բարձրացված էր անասնապահությամբ զբաղվող ֆերմերներին ցուցաբերվող օգնության ընդլայնումը, ինչը հնարավորություն կստեղծի զգալիորեն նվազեցնել արտադրության մեջ ներկայումս օգտագործվող կաթի փոշու ներկրման ծավալները:

Ինչ վերաբերում է զբոսաշրջությանը, ապա ուսումնասիրության արդյունքների համաձայն, այդ ոլորտում ենթակառույցների մակարդակը դեռեւս հեռու է բավարար լինելուց: Հարցի կարգավորման համար, անհրաժեշտ է ենթակառույցային նախագծերի ֆինանսավորման ավելացում եւ կոնկրետ, գործնական կիրարկում ունեցող նախագծերի իրականացման խրախուսում:

ՍԻՄՈՆ ԿԻԼԱՋԵ

ԵՆԹԱԿԱՌՈՒՅՑ

ԲԱՑՎԵՑ ՀԵՇՏԻԱՅԻ ՆՈՐԱԿԱՌՈՒՅՑ ՃԱՆԱՊԱՐՀԸ

Հուլիսի 13-ին Նինոծմինդայի մունիցիպալիտետի Հեշտիա գյուղում հանդիսավորությամբ կատարվեց նորակառույց ճանապարհի բացման արարողությունը: Գյուղի մուտքի դիմաց, Նինոծմինդայի մունիցիպալիտետի քաղաքապետ Անիվարդ Մոսոյանը եւ Վրաստանի խորհրդարանի Նինոծմիդայից եւ Ախալքալաքիից մեծամասնական պատգամավոր Հենզել Մկոյանը հանդիսավորությամբ կտրեցին կարմիր ժապավենը, հանդես եկան շնորհավորական խոսքով:

Նորակառույց ճանապարհի բացումով ուրախ էին ոչ միայն հեշտիացիները, այլեւ մոտակա Դաուրմա, Թորիա եւ Ուչմանա գյուղերի բնակիչները:

Տեղացիները նշում են, որ դեռ Խորհրդային Միության տարիներին էր խոսվում Նինոծմինդայից Հեշտիա տանող ճանապարհի ասֆալտապատման մասին, բայց միայն 30 տարի անց սկսվեց այդ ժամանակակից ճանապարհի վերանորոգումը:

Հեշտիացիները համոզված են, որ ասֆալտապատումը կշարունակվի եւ ոչ միայն Նինոծմինդա կիասնի, այլեւ Ուչմանա եւ Թորիա գյուղեր:

- Վրաստանը գնում է դեպի Եվրամիություն, մենք էլ հույս ունենք, որ մեր չափանիշները կհամապատասխանեն եվրոպական չափանիշներին եւ կկարողանանք զարգանալ: Ամեն դեպքում, պետք է լավատեսությամբ տրամադրվենք,- մեզ հետ զրույցում ասում է Լաերտ Հովհաննիսյանը:

- Առաջիկայում հույս ունենք, որ կասֆալտապատվի թե՛ մեր, թե՛ Ուչմանա տանող ճանապարհը, ինչը կնպաստի գյուղերի զարգացմանը, որոնք կկարողանան ավելի սերտ կապ հաստատել քաղաքի հետ: Նինոծմինդայում աշխատանք գտնելու դեպքում, բարեկարգ ճանապարհով հնարավոր կլինի առանց խնդիրների աշխատանքի գնալ-գալ, առեւտուր անել: Իմ կարծիքով, 21-րդ դարում, եթե գյուղերը չեն կարող նորմալ կապ հաստատել քաղաքի հետ, ապա զարգանալ հնարավոր չէ, իսկ կապի ամենակարեւոր բաղադրիչը ճանապարհն է,- ասում է Արտյոմ Պետրոսյանը:

Նինոծմինդայի սակրեբուլոյի պատգամավոր Վահան Արոյանի խոսքով, նախագծի համար տրամադրվել էր 1 մլն 791 հազար 528 լարի գումար:

Իր ելույթում Հենզել Մկոյանն ընդգծեց, որ մինչեւ 2021 թվականի վերջը «Վրացական երազանք-Ժողովրդավարական Վրաստան» իշխող կուսակցության ջանքերով, մունիցիպալիտետներում կասֆալտապատվեն բոլոր գյուղական ճանապարհները:

Հեշտիայի գյուղական համայնքում քաղաքապետի ներկայացուցիչ Եգոր Քոթոյանը, ընդհանրացնելով անցած տարիների աշխատանքը, նշեց, որ Նինոծմինդա-Հեշտիա ավտոճանապարհի ասֆալտապատումը մեկնարկել էր 2015 թվականին եւ տարիների ընթացքում ասֆալտապատվել էր 3,5 կիլոմետր ճանապարհ, իսկ այս տարի ասֆալտապատվեց 4,5կմ ու հասցվեց մինչեւ Հեշտիա գյուղ:

- Մենք այսքանով չենք բավարարվում, քանի որ Հեշտիայի գյուղական համայնքը բաղկացած է չորս գյուղերից: Մեր հաշվարկներով, Հեշտիայից Ուչմանա եւ Թորիա գյուղեր տանող ճանապարհը իրար հետ մոտավորապես կազմում է 5,5 կմ: Աշխատելու ենք, որ 2020 թվականին քաղաքապետարանը միջոցներ գտնի այս ճանապարհների ասֆալտապատման համար, քանի որ ճանապարհները խնդիրներ են ստեղծում գրեթե բոլոր տեսակի ավտոմեքենաների համար,- մեզ հետ զրույցում ասաց նա՝ հավելելով, որ մինչեւ 2021 թվականը կասֆալտապատվեն դեպի Թորիա եւ Ուչմանա տանող ճանապարհները:

ՌՈՒԶԱՆ ՄԿՐՏՉՅԱՆ

ք.Նինոծմինդա